

ՄԱՆԵ ԿԱՐԵՆԻ ԿՈՆԻՆՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 12.12.1987

Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Ալավերդի

https://orcid.org/0009-0002-9781-3712

Մանե Կարենի Կոնինյանը միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 2004 թ. ընդունվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետ, որն ավարտել է 2008 թ.:

2008 թ. ուսումը շարունակել է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 2010 թ.:

2011 թ. ձևակերպվել է որպես հայցորդ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնում:

2021 թ. նշանակվել է կրտսեր գիտաշխատող:

Մանե Կոնինյանը 2011 թ. աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես ավագ լաբորանտ, այնուհետև նշանակվել է կրտսեր գիտաշխատողի պաշտոնում:

2019-2024 թթ. Մ. Կոնինյանը համատեղությամբ աշխատել է Երևանի թիվ 112 ավագ դպրոցում որպես ուսուցչուհի:

Մ. Կոնինյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի, արևմտահայության խախտված իրավունքների պատմության հարցերը:

Մ. Կոնինյանը հեղինակ է ավելի քան 11 գիտական հոդվածների:

2023 թ. հանդիսանում է «Հայոց պատմության հարցեր» պարբերականի պատասխանատու քարտուղար:

Մ. Կոնինյանը գիտական զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում:

Մ. Կոնինյանը կուսակցական չէ, ամուսնացած է, ունի երեք որդի: